



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ Ի ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 մայիսի 2023 թվականի N 479-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՏԱԹԵՎԻԿ ՄԱՄԻԿՈՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ»-Ի ՈԳԵԼԻՑ ԵՎ
ԱԼԿՈՆՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Տաթևիկ Մամիկոնի Պետրոսյանի»-ի 2023 թվականի մայիսի 22-ի N48 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Մեծավան, Վարդանանց փողոց, տուն 4 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր, «Տաթևիկ Մամիկոնի Պետրոսյանի»-ի հայտը բավարարել և նրան տալ 2023 թվականի երկրորդ եռամսյակի համար ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝

[Signature]

Ն ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2023թ. մայիսի 22

ք.Տաշիր





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 մայիսի 2023 թվականի N 480-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՕՔՍԱՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԶԱԿԻ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ
ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Օքսանա Մարգարյան Արշակի»-ի 2023 թվականի մայիսի 22-ի N47 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Պուշկին փողոց, տուն 89 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Օքսանա Մարգարյան Արշակի»-ի հայտը բավարարել և նրան տալ 2023 թվականի երկրորդ եռամսյակի համար ոգելից, ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝**

Ն. ԲԱԴՂԱՍԱՐՅԱՆ

2023թ. մայիսի 22

ք.Տաշիր





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 մայիսի 2023 թվականի N 481-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածով, հիմք ընդունելով քաղաքացիներ Էմմա Պողոսի Պապիկյանին և Ալինա Գևորգի Անտոնյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասից (վկայական 1768535 տրված 16.06.2003թ) հրաժարվելու մասին դիմումը. (մուտք՝ 22.05.2023-ի ՔԴ-539-23)

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Քաղաքացիներ Էմմա Պողոսի Պապիկյանին և Ալինա Գևորգի Անտոնյանին սեփականության իրավունքով պատկանող հետևյալ հողամասը ճանաչել համայնքային սեփականություն.

1) 06-042-0126-0305 կադաստրային ծածկագրով 0,246 հա վարելահող:

2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունվելուց հետո, սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով՝ 15-օրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում:

3. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝**

Սարգսյան Վ. Սարգսյան

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2023թ. մայիսի 23

ք.Տաշիր





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 մայիսի 2023 թվականի N 482-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածով, հիմք ընդունելով քաղաքացիներ Էմմա Պողոսի Պապիկյանին և Ալինա Գևորգի Անտոնյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասից (վկայական 1768538 տրված 16.06.2003թ) հրաժարվելու մասին դիմումը (մուտք՝ 22.05.2023-ի ՔԴ-539-23)

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Քաղաքացիներ Էմմա Պողոսի Պապիկյանին և Ալինա Գևորգի Անտոնյանին սեփականության իրավունքով պատկանող հետևյալ հողամասը ճանաչել համայնքային սեփականություն.

1) 06-042-0204-0211 կադաստրային ծածկագրով 0,053 հա խոտհարք:

2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունվելուց հետո, սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով՝ 15-օրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում:

3. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝**

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2023թ. մայիսի 23
ք.Տաշիր





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 մայիսի 2023 թվականի N 483-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածով, հիմք ընդունելով քաղաքացիներ Էմմա Պողոսի Պապիկյանին և Ալինա Գևորգի Անտոնյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասից (վկայական 1768539 տրված 16.06.2003թ) հրաժարվելու մասին դիմումը. (մուտք՝ 22.05.2023-ի ՔԴ-539-23)

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Քաղաքացիներ Էմմա Պողոսի Պապիկյանին և Ալինա Գևորգի Անտոնյանին սեփականության իրավունքով պատկանող հետևյալ հողամասը ճանաչել համայնքային սեփականություն.

1) 06-042-0202-0211 կադաստրային ծածկագրով 0,074 հա խոտհարք:

2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունվելուց հետո, սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով՝ 15-օրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում:

3. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Սարգսյան **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2023թ. մայիսի 23
Վ. Տաշիր





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 մայիսի 2023 թվականի N 484-Ա

**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 10 ՄԱՅԻՍԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 454-Ա ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի, Տաշիր համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի 10-ի, «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ Տաշիր համայնք քաղաք Տաշիր, Զահուկյան փողոց, թիվ 3, հասցեում գտնվող «Ջեներալ Քեյթլ» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող գործարանի հողամասի սահմանային չափերը ճշտելու եվ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 24-ի N 282-ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 454-Ա որոշման 1-ին կետի «0,699» թիվը փոխարինել «2,699» թվով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝

Սահակ Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2023թ. մայիսի 23
ք.Տաշիր





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 մայիսի 2023 թվականի N 485-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ ՔԱՂԱՔ
ՏԱՇԻՐ ՊՈՒՇԿԻՆԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 145 ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՍ
ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Արմեն Միսակի Փեթակչյանի (նույնականացման քարտ՝ 013562822, տրված՝ 13.04.2022-ին) դիմումը (մուտք՝ 19/04/2023-ի ՔԴ-429-23), անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը N 28102019-06-0053, «Գուգարաց Աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագիծը, կադաստրի կոմիտեում հաշվառված թիվ 2023YKME4J ծածկագիրը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումով հաստատված կարգի, 8-րդ, 9-րդ, 11-րդ և 13-րդ կետի ա) և բ) ենթակետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի 14-Ն որոշումով, նկատի ունենալով որ 2010 թվականի կառուցված ինքնական կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ճանաչել օրինական ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, Պուշկինի փողոց թիվ 145 հասցեում (կադաստրային ծածկագիր՝ 06-008-0206-0031) Արմեն Միսակի Փեթակչյանի կողմից բնակավայրերի բնակելի կառուցապատման 0,10500 հա հողամասում ինքնական կառուցված՝ 315,00 քմ ընդհանուր մակերեսով շինությունները համաձայն «Գուգարաց Աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի.

- 1) բնակելի տուն՝ 254,27 քմ ընդհանուր մակերեսով,
- 2) աստիճանահարթակ՝ 10,84 քմ,
- 3) բաց պատշգամբ՝ 6,62 քմ,

- 4) ամառային խոհանոց՝ 16,20 քմ,
- 5) թռչնանոց՝ 19,60 քմ,
- 6) պարիսպ՝ 7,47 քմ ընդհանուր մակերեսով,

2. Պարտավորեցնել ինքնական կառույցն իրականացնող Արմեն Միսակի Փեթակչյանին սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Տաշիր համայնքի բյուջե վճարել (հաշվեհամար՝ 900275081124) ինքնական կառույցների օրինականացման համար սահմանված վճարը՝ ընդհանուր շինությունների համար 323820 (երեք հարյուր քսաներեք հազար ութ հարյուր քսան) ՀՀ դրամ:

3. 60-օրյա ժամկետում սահմանված գումարի չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝**

(Signature)

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ



2023թ. մայիսի 24
ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մայիսի 2023 թվականի N 486-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆԿՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածով, հիմք ընդունելով քաղաքացիներ Երվանդ Արմենակի, Սիրանուշ Հաբեթի, Կարինե Երվանդի, Սերինե Երվանդի և Կարեն Երվանդի Սարգսյաններին սեփականության իրավունքով պատկանող հողամասից (վկայական 406055 տրված 16.09.2002թ) հրաժարվելու մասին դիմումը (մուտք՝ 24.05.2023-ի ՔԴ-558-23)

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Քաղաքացիներ Երվանդ Արմենակի, Սիրանուշ Հաբեթի, Կարինե Երվանդի, Սերինե Երվանդի և Կարեն Երվանդի Սարգսյաններին սեփականության իրավունքով պատկանող հետևյալ հողամասը ճանաչել համայնքային սեփականություն.

1) 06-074-0216-0228 կադաստրային ծածկագրով 0,4 հա վարելահող:

2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունվելուց հետո, սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով՝ 15-օրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում:

3. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝**

2023թ. մայիսի 25
ք.Տաշիր



Ն. ԲԱՂՎԱՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մայիսի 2023 թվականի N 487-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածով, հիմք ընդունելով քաղաքացիներ Կոստիկ Գասպարի, Մարինե Կոստիկի, Հայկ Կոստիկի Հովհաննիսյաններին և Սուսաննա Դավիթի Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասից (վկայական 1607179 տրված 31.08.2004թ) հրաժարվելու մասին լիազորված անձ՝ Կարեն Մարկարի Գրիգորյանի(անձագիր՝ 78 06 561124) դիմումը՝ (մուտք՝ 17.05.2023-ի ՔԴ-528-23)

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Քաղաքացիներ Կոստիկ Գասպարի, Մարինե Կոստիկի, Հայկ Կոստիկի Հովհաննիսյաններին և Սուսաննա Դավիթի Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող հետևյալ հողամասը ճանաչել համայնքային սեփականություն.

1) 06-024-0101-0031 կադաստրային ծածկագրով 0,971 խոտհարք հա :

2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունվելուց հետո, սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով՝ 15-օրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում:

3. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝**

2023թ. մայիսի 25
ք.Տաշիր





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ԽԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մայիսի 2023 թվականի N 488-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածով, հիմք ընդունելով քաղաքացիներ Կոստիկ Գասպարի, Մարինե Կոստիկի, Հայկ Կոստիկի Հովհաննիսյաններին և Սուսաննա Դավիթի Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասից (վկայական 1607181 տրված 31.08.2004թ) հրաժարվելու մասին լիազորված անձ՝ Կարեն Մարկարի Գրիգորյանի(անձագիր՝ 78 06 561124) դիմումը՝ (մուտք՝ 17.05.2023-ի ՔԴ-528-23)

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Քաղաքացիներ Կոստիկ Գասպարի, Մարինե Կոստիկի, Հայկ Կոստիկի Հովհաննիսյաններին և Սուսաննա Դավիթի Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող հետևյալ հողամասը ճանաչել համայնքային սեփականություն.

1) 06-024-0101-0046 կադաստրային ծածկագրով 0,779 խոտհարք հա :

2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունվելուց հետո, սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով՝ 15-օրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում:

3. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՌԱՋԻՆ ՏԵԼԱՎԱՐ

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2023թ. մայիսի 25
ք.Տաշիր





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մայիսի 2023 թվականի N 489-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածով, հիմք ընդունելով քաղաքացիներ Կոստիկ Գասպարի, Մարինե Կոստիկի, Հայկ Կոստիկի Հովհաննիսյաններին և Սուսաննա Դավիթի Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասից (վկայական 1607182 տրված 31.08.2004թ) հրաժարվելու մասին լիազորված անձ՝ Կարեն Մարկարի Գրիգորյանի(անձագիր՝ 78 06 561124) դիմումը՝ (մուտք՝ 17.05.2023-ի ՔԴ-528-23)

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Քաղաքացիներ Կոստիկ Գասպարի, Մարինե Կոստիկի, Հայկ Կոստիկի Հովհաննիսյաններին և Սուսաննա Դավիթի Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող հետևյալ հողամասը ճանաչել համայնքային սեփականություն.

1) 06-024-0119-0031 կադաստրային ծածկագրով 1,328 խոտհարք հա :

2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունվելուց հետո, սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով՝ 15-օրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում:

3. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հանձնաժողովին ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՍԻՍԱՆ**

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2023թ. մայիսի 25
ք.Տաշիր





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2023 թվականի N 490-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետը, 50-րդ, 51-րդ, 60-րդ և 62-րդ կետը և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2023 թվականի համախմբ տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 30-Ն որոշումով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող Ալիտա Հակոբի Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող գույքին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման սեփականության վկայական՝ 2399177 տրված՝ 27.07.2023-ին) ՀՀ Լոռու մարզ, քաղաք Տաշիր, Լենինի փողոց, տուն թիվ 108 հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Վ. Սարգսյան փողոց, տուն թիվ 108 (փոստային դասիչ՝ 2101) հասցեն:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ տեղական տուրք՝ բնակելի տան վերահասցեավորման համար:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝**

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2023թ. մայիսի 26

ք. Տաշիր





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2023 թվականի N 491-Ա

**ԶՎԱՐԴ ԴԱՎՈՅԱՆԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ
ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. ՀՀ Տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Զվարդ Դավոյանը հանդիսանալով հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, իրավահարաբերության ծագման պահին գործող « Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2023 թվականի մայիսի 05-ին « Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի և գույքահարկի գանձման հարցի քննության նպատակով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ օբյեկտիվ քննության արդյունքում բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Տաշիրի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի և ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված տվյալների՝ 06-039-0126-0400, 06-039-0164-0017, 06-039-0169-0379, 06-039-0126-0270, 06-039-0151-0086, 06-039-0007-0006 և 06-039-0009-0001 կադաստրային ծածկագրերով, 2.127 հա ընդհանուր մակերեսով հողատմասերը հանդիսանում են Զվարդ Դավոյանի սեփականությունը, որոնք իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի Հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով համար վումենհարկվող օբյեկտ:

Նշված հողատմասերի հողի հարկը 2008-2020 թվականների համար 2023 թվականի մայիսի 03-ի դրությամբ կազմում է 293.034 (երկու հարյուր իննսուներեք հազար երեսունչորս) ՀՀ դրամ, որից 167.595 (հարյուր վաթսուներեք հազար հինգ հարյուր իննսունհինգ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 125.439 (հարյուր քսանհինգ հազար չորս հարյուր երեսունինը) ՀՀ դրամ՝ որպես տույժ :

Անշարժ գույքի հարկը 2021-2022 թվականների համար կազմում է 35.644 (երեսունհինգ հազար վեց հարյուր քառասունչորս) ՀՀ դրամ:

2023 թվականի մայիսի 05-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետի հիմքով Տաշիրի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 թվականի մայիսի 26-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և չի ներկայացել քաղաքացի Զվարդ Դավոյանը (հիմք՝ փոստային անդորրագիր 19.05.2023) :

(Վարչական վարույթի լսումներն իրականացվել են պատշաճ ծանուցված քաղաքացի Զվարդ Դավոյանի բացակայությամբ):

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 225-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 227-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ է համարվում անշարժ գույքը՝ հողամասերը և (կամ) դրանց բարելավումները: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկային վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով իրավահարաբերության պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին, 16-րդ, ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1.Քաղաքացի Զվարդ Դավոյանից հօգուտ Տաշիր համայնքի բյուջեի գանձել 328.678 (երեք հարյուր քսանութ հազար վեց հարյուր յոթանասունութ) ՀՀ դրամ.

293.034 (երկու հարյուր իննսուներեք հազար երեսունչորս) ՀՀ դրամ ՀՀ դրամ՝ որպես 06-039-0126-0400, 06-039-0164-0017, 06-039-0169-0379, 06-039-0126-0270, 06-039-0151-0086, 06-039-0007-0006 և 06-039-0009-0001 կադասրային ծածկագրերով, 2.127 հա ընդհանուր մակերեսով հողամասերի հողի հարկ, որից

167.595 (հարյուր վաթսունյոթ հազար հինգ հարյուր իննսունհինգ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 125.439 (հարյուր քսանհինգ հազար չորս հարյուր երեսունինը) ՀՀ դրամ՝ որպես տույժ, 35.644 (երեսունհինգ հազար վեց հարյուր քառասունչորս) ՀՀ դրամ՝ որպես անշարժ գույքի հարկ:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիրի համայնքի ղեկավարին՝ այն ստանալուց և դրա ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է կատարման ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տաշիր համայնքի ղեկավարը:

5. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

6. Հողի հարկը պետք է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900278085034 հաշվեհամարին, անշարժ գույքի հարկը՝ 900275002039 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2023թ. մայիսի 26

ք.Տաշիր





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2023 թվականի N 492-Ա

**ԱՆԴՐԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԵՎ ԱԻԴԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. ՀՀ Տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացիներ Անդրանիկ Գրիգորյանը և Աիդա Գրիգորյանը հանդիսանալով հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, իրավահարաբերության ծագման պահին գործող « Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չեն կատարել հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2023 թվականի մայիսի 05-ին « Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի և գույքահարկի գանձման հարցի քննության նպատակով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ օբյեկտիվ քննության արդյունքում բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Տաշիրի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի և ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված տվյալների՝ 06-039-0142-0017, 06-039-0147-0035, 06-039-0070-0030, 06-039-0139-0043, 06-039-0040-0003 և 06-039-0132-0016 կադաստրային ծածկագրերով, 1. 211 հա ընդհանուր մակերեսով հողատմասերը հանդիսանում են Անդրանիկ Գրիգորյանի և Աիդա Գրիգորյանի սեփականությունը, որոնք իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի Հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով համարվում են հարկվող օբյեկտ :

Նշված հողատմասերի հողի հարկը 2008-2020 թվականների համար 2023 թվականի մայիսի 03-ի դրությամբ կազմում է 195.665 (հարյուր իննսուներեք հազար վեց հարյուր վաթսուներեք) ՀՀ դրամ, որից 116.869 (հարյուր տասնվեց հազար ութ

հարյուր վաթսուներեք) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 78.796 (յոթանասուներեք հազար յոթ հարյուր իննսուներեք) ՀՀ դրամ՝ որպես տույժ :

Անշարժ գույքի հարկը 2021-2022 թվականների համար կազմում է 26.871 (քսանվեց հազար ութ հարյուր յոթանասունմեկ) ՀՀ դրամ,որից 23.698 (քսաներեք հազար վեց հարյուր իննսուներեք) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 3.173 (երեք հազար հարյուր յոթանասուներեք) ՀՀ դրամ՝ որպես տույժ :

2023 թվականի մայիսի 05-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետի հիմքով Տաշիրի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 թվականի մայիսի 26-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և չեն ներկայացել քաղաքացիներ Անդրանիկ Գրիգորյանը և Աիդա Գրիգորյանը (հիմք՝ փոստային անդորրագիր 19.05.2023) :

(Վարչական վարույթի լսումներն իրականացվել են պատշաճ ծանուցված քաղաքացիներ Անդրանիկ Գրիգորյանի և Աիդա Գրիգորյանի բացակայությամբ):

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը,պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 225-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 227-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ է համարվում անշարժ գույքը՝ հողամասերը և (կամ) դրանց բարելավումները: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկային վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով իրավահարաբերության պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին,16-րդ, ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

1. Քաղաքացիներ Անդրանիկ Գրիգորյանից և Աիդա Գրիգորյանից հոգուտ Տաշիր համայնքի բյուջեի գանձել 222.536 (երկու հարյուր քսաներկու հազար հինգ հարյուր երեսունվեց) ՀՀ դրամ.

195.665 (հարյուր իննսունհինգ հազար վեց հարյուր վաթսունհինգ) ՀՀ դրամ՝ որպես 06-039-0142-0017, 06-039-0147-0035, 06-039-0070-0030, 06-039-0139-0043, 06-039-0040-0003 և 06-039-0132-0016 կադասրային ծածկագրերով, 1.211 հա ընդհանուր մակերեսով հողամասերի հողի հարկ,որից 116.869 (հարյուր տասնվեց հազար ութ հարյուր վաթսունինը) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 78.796 (յոթանասունութ հազար յոթ հարյուր իննսունվեց) ՀՀ դրամ՝ որպես տույժ ,

26.871 (քսանվեց հազար ութ հարյուր յոթանասունմեկ) ՀՀ դրամ՝ որպես անշարժ գույքի հարկ,որից 23.698 (քսաներեք հազար վեց հարյուր իննսունութ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 3.173 (երեք հազար հարյուր յոթանասուներեք) ՀՀ դրամ՝ որպես տույժ ::

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիրի համայնքի ղեկավարին՝ այն ստանալուց և դրա ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է կատարման ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում.

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տաշիր համայնքի ղեկավարը:

5. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

6.Հողի հարկը պետք է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900278085034 հաշվեհամարին, անշարժ գույքի հարկը՝900275002039 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2023թ. մայիսի 26

ք.Տաշիր





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ԵԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2023 թվականի N 493-Ա

**ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԴԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին» N57-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն, ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի եզրակացությունները՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1) Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝**

Վ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2023թ. մայիսի 26

ք.Տաշիր



Հավելված
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Տաշիր համայնքի ղեկավարի
2023 թվականի մայիսի 26-ի N493-Ա որոշման

1. Մարուս Պողոսի Տեր Հովհաննիսյան՝ 10000դր (տասը հազար) դրամ, սոց.օգնություն
2. Շավարշ Իյուշկի Սերգեյան՝ 10000դր(տասը հազար) դրամ, սոց.օգնություն
3. Էմմա Ալեքսանի Բարսեղյան՝ 15000դր (տասնհինգ հազար) դրամ , սոց.օգնություն
4. Մարետա Խաչիկի Հովեյան՝ 15000դր (տասնհինգ հազար) դրամ, սոց. օգնություն
5. Ելենա Սերոբի Այրինյան՝ 15000դր (տասնհինգ հազար) դրամ , սոց.օգնություն
6. Անահիտ Շալիկոյի Քոչարյան 15000դր (տասնհինգ հազար) դրամ , սոց.օգնություն
7. Անուշ Դավիթի Իգիթյան - 20000դր(քսան հազար) դրամ, սոց. օգնություն
8. Յուրիկ Ստեփանի Ավագիմով - 20000դր(քսան հազար) դրամ, սոց. օգնություն
9. Ռաֆայել Ռուբենի Սարգիսով - 20000դր(քսան հազար) դրամ, սոց. օգնություն
10. Մարգարիտ Սիմոնի Անախապյան - 20000դր(քսան հազար) դրամ, սոց. օգնություն
11. Ալվարդ Սերյոժայի Քոչարյան - 20000 դր(քսան հազար) դրամ, սոց. օգնություն
12. Հասմիկ Պետրոսի Յավրումյան - 20000 դր(քսան հազար) դրամ, սոց. օգնություն
13. Էլիզա Գասպարի Խանադյան - 20000 դր(քսան հազար) դրամ, սոց. օգնություն
14. Սուսաննա Լևոնի Եղյան՝ 20000դր (քսան հազար) դրամ, սոց. օգնություն
15. Մխիթար Գևորգի Վելիցյան՝ 20000դր (քսան հազար) դրամ, սոց. օգնություն
16. Մկրտիչ Հովհաննեսի Գրիգորյան՝ 20000դր(քսան հազար) դրամ, սոց. օգնություն
17. Սուսաննա Պետրոսի Վելիցյան՝ 20000դր (քսան հազար) դրամ, սոց. օգնություն
18. Նազիկ Սարգսի Առաքելյան՝ 20000դր(քսան հազար) դրամ, սոց. օգնություն
19. Հերմինե Ժուլվերի Հունանյան՝ 20000դր(քսան հազար) դրամ, սոց. օգնություն
20. Լևոն Տիգրանի Սարգսյան - 25000դր (քսանհինգ հազար) դրամ, սոց. օգնություն
21. Մանուշակ Ժիրայրի Ղազումյան - 25000դր (քսանհինգ հազար) դրամ, սոց.օգնություն
22. Սաթենիկ Էդվարդի Սարգսյան - 25000դր (քսանհինգ հազար) դրամ, սոց. օգնություն
23. Ռոզա Լյովայի Մարկարյան՝ 25000դր (քսանհինգ հազար) դրամ, սոց. օգնություն
24. Թամարա Սարգսի Նազարյան՝ 25000դր (քսանհինգ հազար) դրամ, սոց. օգնություն
25. Բերսաբե Մկրտչի Զոբանյան՝ 25000դր (քսանհինգ հազար) դրամ, սոց. օգնություն
26. Ծովինար Ժորայի Բարսեղյան՝ 25000դր (քսանհինգ հազար) դրամ, սոց. օգնություն
27. Արմեն Յուլակի Ավետիսյան՝ 30000դր (երեսուն հազար) դրամ, սոց. օգնություն
28. Լաուրա Սերյոժայի Աղելյան- 30000 դր(երեսուն հազար) դրամ, սոց. օգնություն
29. Նաթելա Պողոսի Ղազարյան՝ 30000դր(երեսուն հազար) դրամ, սոց. օգնություն
30. Էթերա Ազատի Ստեփանյան՝ 30000 դր(երեսուն հազար) դրամ, սոց. օգնություն

31. Կարինե Անուշավանի Ստեփանյան՝ 40000դր (քառասուն հազար) դրամ, սոց. օգնություն
32. Արեքնազ Աշոտի Սերգեյան՝ 40000դր (քառասուն հազար) դրամ, սոց. օգնություն
33. Ալեքսանդրա Սամվելի Իվանովա՝ 40000դր(քառասուն հազար) դրամ, սոց. օգնություն
34. Արուս Յոլակի Գևորգյան՝ 40000դր (քառասուն հազար) դրամ, սոց. օգնություն
35. Անուշ Սամվելի Սիմոնովա՝ 40000 դր (քառասուն հազար) դրամ, սոց. օգնություն

Ընդամենը 835 000 (երեք հարյուր ութսուն հազար) դրամ

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝**



Ն. ՍՈԼՈՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2023 թվականի N 494-Ա

**ԱՐՍԵՆ ՄԽՈՅԱՆԻՆ, ԱՐՄԱՆ ՄԽՈՅԱՆԻՆ ԵՎ ԱՆՆԱ ՄԽՈՅԱՆԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ
ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. ՀՀ Տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

